

Գևորգ Ս. Խուրդինյան  
Պատմ.գիտ. դոկտոր

«Հարկ է ընտրել բարիքը մարմնավորող մեկին և հանապազ պահել նրան աչքի առաջ, որպեսզի ապրենք այնպես, ասես թե նա նայում է մեզ և վարվենք այն կերպ, ասես թե նա տեսնում է մեզ»<sup>1</sup>

Սենեկա Կրտսեր

## ԶԱՎԱՐՅԱՆԻ ՆՎԻՐԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ

Զավարյանի կյանքի ու գործունեության հիմնական շրջափուլերի և բնագավառների քննությանը նվիրված «ՎԷՄ»-ի ներկա Հավելվածը անավարտ կլիներ, եթե վերջում չփորձեինք հստակեցնել, թե մեր օրերում ինչն է ամենակարևորն ու հրատապը նրա հարուստ ժառանգության մեջ՝ իբրև հաջորդ սերունդներին ուղղված քաղաքական կտակի մարմնավորում:

Ու թեև պատմության ինվարիանտության երկայթյա տրամաբանությամբ այսօր ուղղակի անհնար է պատկերացնել 100 տարի առաջ Զավարյանի անցած նվիրումի և ինքնագոհաբերության Գողգոթայի մեխանիկական կրկնությունը, բայց չպետք է մոռանալ, որ պատմության զարգացման նոր, ավելի բարձր մակարդակի վրա անխուսափելիորեն ի հայտ են գալիս նախորդ իրադարձությունների ու դեմքերի նմանություններն ու ընդհանրությունները: Ուստի եզակիի ու անկրկնելիի և ընդհանուրի ու կրկնվողի համադրությանն ականատես մեր խղճի ու բարոյականության «ներքին ձայնն» այսօր ականայից հարց է տալիս՝ ինչպե՞ս կվարվեր Սիմոն Զավարյանը, եթե լիներ մեր կողքին և վերապրեր մեզ բաժին ընկած մարտահրավերները:

Պատճառն ակնհայտ է. լինելով ազգի բարոյական որակների մարմնավորողներից մեկը՝ Սիմոն Զավարյանը պատկանում է ոչ միայն իր ապրած դարաշրջանին, այլև Հայոց պատմությանը՝ որպես մեկ ամբողջի: Ուստիև 100 տարի առաջ նրա բարձրացրած հիմնախնդիրներն ու առաջադրած լուծումները, լինելով նախորդ սերունդներին մտատանջող հարցերի պատասխաններ, սաղմնային վիճակում իրենց մեջ պարունակում են նաև իր մահվանից 100 տարի անց ազգի առջև ծառայած մարտահրավերների հաղթահարման ուղիները:

<sup>1</sup> Сенека. Нравственные письма к Луцилию, XI, 8.

ՎԷՄ համահայկական հանդես, Ե (ՃԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

Եվ ապրելով մեր օրերում, որպես հավերժի ճամփորդ՝ կշարունակենք արդյոք Զավարյանը Խորենացիով սկսված և իրենով շարունակված՝ ազգի բարոյական որակների անկման «...սերն ու ամոթը ամենքից վերացած»<sup>2</sup> լինելու մասին հին «Ողբ»-ը, թե՛ կփորձեր բռնել մեր «նոր Անին» հանձնելու գործընթացի մեջ գտնվող՝ «...ոյժ գանձուց սիրող...»<sup>33</sup> նորօրյա Վեստ Մարգիաների ու Պետրոս Գետադարձների ձեռքը:

Սակայն, ինչ էլ որ լիներ, Զավարյանն այսօր անպայման տեր կկանգներ ՀՅԴ հիմնադիր երրորդության առաջադրած՝ ազգի քաղաքական վերանորոգման հիմնանպատակի իր բաժնին՝ հայության **բարոյական վերածննդի** գաղափար-սկզբունքին: Դրանում համոզվում ենք՝ ելնելով նրա գործունեության ընդհանուր հաշվեկշռից, որը միմյանցից հստակորեն տարանջատում է այն ամենը, ինչը **հաջողվեց** անել Զավարյանին, և այն ամենը, ինչն իր կարճատև երկրային կյանքի ընթացքում, դժբախտաբար, նրան այդպես էլ **չհաջողվեց** հասցնել ավարտին:

Ազգի բարոյական վերածննդի գաղափար-սկզբունքը Զավարյանն առաջադրեց ու հետապնդեց միաժամանակ երկու հարթությունների վրա: **Առաջին**՝ խոսքով, քարոզչությամբ և անդուլ աշխատանքով հարազատ կուսակցության ներսում ազնիվ, խիզախ ու մարտնչող հայի բարոյական տիպարի կերտում՝ **հերոսականության** գաղափարի արմատավորում, և **երկրորդ**՝ ազգի բարոյական վերածննդի գաղափար-սկզբունքի կիրառում հանուն ամբողջական հայի բարոյական կերպարը մարմնավորող առողջ ու կենսունակ ազգի ձևավորման: Այս երկու չափությունների՝ ճշմարիտ խոսքի ու գործի վրա հիմնված ներքին համառ աշխատանքի և օտարի տիրապետության դեմ պայքարի անխզելի միասնությունը Ս. Զավարյանին դարձրին ոչ միայն ՀՅ Դաշնակցության խիղճը, այլև ազգի բարոյական վերածննդի գաղափար-սկզբունքի հիմնական կրողներից մեկը և՛ իր ժամանակներում, և՛ Հայոց պատմության մեջ ընդհանրապես: Ու քանի որ հավերժական մեծություն **բարոյականությունը** ժամանակ ու տարածություն չի ձանաչում և տիեզերական ընդգրկում ունի, ապա կարող ենք վստահաբար եզրակացնել, զավարյանական բարոյաբանությունը, որը խարսխված էր նոր ժամանակների լուսավորչալ հայ մարդուն բնորոշ ազատության և արդարության իդեալների վրա, «առաջին մասով» կատարել է իր **պատմական առաքելությունը**՝ կերտելով ազգի ազատության գաղափարին նվիրված դաշնակցականների երկրորդ՝ Անկախության սերունդը: Իր հարազատ կուսակցության ներսում իրականացված անդուլ գաղափարադաստիարակչական աշխատանքով նա ստեղծել է հեղափոխական գործչի այն տիպական հատկանիշները, որոնք համարվել են **դաշնակցականության** իսկական չափանիշներ: Նման աշխատանքների ծավալման բեմահարթակները նախ և առաջ 19-րդ դարի վերջին ու 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած ՀՅԴ Ընդհանուր ու ռայոնական ժողովներն էին, որոնց պատգամավորներին Զավարյանը պարտադիր կերպով սերտել տվեց ՀՅԴ բարոյաքաղաքական սկզբունքները: Շատերն են հետագայում վկայել, որ նման բարոյական պարտադրանքի առջև դրված

2 **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., Երևանի համալս. հրատ., 1981, էջ 316:

3 Պատմություն Արիստակիսի Լաստիվերցույ, Եր., 1963, էջ 82:

երիտասարդ պատգամավորների համար Զավարյան-ուսուցչի ձեռքից ազատվելու հնարավորություն ուղղակի չկար, որովհետև նա ո՛չ իրեն էր խնայում և ո՛չ էլ իր կուսակից-աշակերտներին:

Ավելին՝ առաջնորդվելով ՀՅԴ հավատո հանգանակի սկզբունքներով՝ «Դաշնակցութեան մէջ, անհատներից, խմբերից և կոմիտէներից սկսած մինչև Բիւրօ և Պատ. Մարմին, չկայ խնդիր իրաւունքի և իշխանութեան, այլ միմիայն պատասխանատուութեան ու պատրաստականութեան...»<sup>4</sup>, և տարածելով դրանք կուսակցության յուրաքանչյուր անդամի վրա, նա պահանջում էր, որպեսզի «...ամէն մի դաշնակցական տոգորուած ըլլայ ազնիվ մարդուն յատուկ և յեղափոխականին վայել բարոյական-հասարակական յատկութիւններով»<sup>5</sup>:

Միմոն Զավարյանը իր երիտասարդ գործընկերներին տվեց նաև իբրև անաղարտ մարդ ապրելու սեփական՝ անձնական բանալիները: Դրանք նախատեսված էին ինչպես կուսակցության անդամների՝ «Ամէն մի դաշնակցական իր կենաց հացը հայթայթելու է իր ազնիւ աշխատանքով»<sup>6</sup>, այնպես էլ ողջ ազգի համար. «Ընդունելով իբրև սկզբունք, որ ամէն մարդ իր քրտինքովը պիտի աշխատի իր կերած հացը, որ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտվելու»<sup>7</sup>: Ուրեմն՝ ամենօրյա անդուլ աշխատանքով ու քարոզչությամբ Ս.Զավարյանը կերտեց ազգային ընտրախավ դառնալու բռնորդ անհրաժեշտ տվյալներն ունեցող դաշնակցական գործիչների երկրորդ սերունդը, որը նրա մահվանից հաշված տարիներ անց իր ուսերին էր տանելու 1918-1921 թթ. գոյամարտերի հիմնական բեռը:

Սակայն ողջ խնդիրը նրանում է, որ Միմոն Զավարյանը չսահմանափակվեց նման **ծրագիր-մինիմումով**, այլ փորձեց կենտրոնանալ ավելի բարդ ու տարողունակ առաջադրանքի՝ ազգի բարոյական վերածննդի հիմնախնդրի վրա: Այդ նպատակով Զավարյանի կողմից կատարված ուսումնասիրություններն ու դիտարկումները, հրապարակված հոդվածները, քննադատական ելույթները վկայում են հայերիս բնորոշ արատները վեր հանելու և դրանց հաղթահարման դեղատոմսեր առաջարկելու նրա համառ ու հետևողական ջանքերի մասին: Ժամանակի հեռավորությունից պարտավոր ենք արձանագրել, որ այս առումով նույնիսկ ամենապազգային՝ բոլշևիկյան կուսակցության տեսաբանները Զավարյանի ազգային ինքնախարազանումների ու մերկացումների մեկ տասներորդ մասն անգամ չեն արել: Տարբերությունը միայն այն էր, որ Զավարյանը նման քայլի էր դիմում ոչ թե ազգի ու ազգայինի նկատմամբ ունեցած քամահրանքից, այլ սեփական ժողովրդի հանդեպ անսահման սիրուց դրդված, որովհետև նրա կարծիքով՝ «Մէրը, անկեղծ, անշահախնդիր սէրը, թե՛ ամենամեծ ազդակն է մարդու գործունէութեան, ստեղծագործութեան, և թե՛ ամենաառատ աղբիւրն է մարդկային երջանկութեան»<sup>8</sup>:

4 «Միմոն Զավարեան», հատ. Ա., Պէրոյթ, Համազգայինի Վահէ Մէթեան տպարան, 1983, էջ 130:  
5 Նույն տեղում, էջ 142:

6 Նույն տեղում:

7 Մեր ծրագիրը, «Դրօշակ», 1894, N 10, էջ 2:

8 Միմոն Զավարեան, Ի՞նչ կ'ուզեն Դաշնակցականները, «Միմոն Զավարեան», հատ. Գ., էջ 642:

Գիտակցելով պետականագուրկ հայ ազգի զավակներին դարերի ընթացքում բաժին ընկած անհատապես վերապրելու խնդրի արդյունք՝ վառ **անհատների** խճանկարի առկայության փաստը, Զավարյանը հասկանում էր, որ նրանց համախմբման կազմակերպական մեխանիզմները բավարար չեն մարտահրավերների ողջ բարդությունը հաղթահարելու համար: Այդ պատճառով, չհամաձայնելով ժամանակի եվրոպական սոցիալիստական ու սոցիալ-դեմոկրատական մտքի՝ անհատի ու հասարակության փոխհարաբերությունների վերաբերյալ հիմնարար հարցադրումների հետ, Ս. Զավարյանն առաջնորդվում էր պատմության մեջ անհատի դերի առաջնության ելակետով և հանդես էր գալիս իբրև **անհատականության սկզբունքի** համոզված ու հետևողական պաշտպան: Որդեգրելով Ն. Միխայլովսկու «պայքար անհատականության համար» սկզբունքը և մերժելով իր սեղանի գիրքը դարձած Հ. Բոքլի «Քաղաքակրթության պատմությունը Անգլիայում» աշխատության պոզիտիվիստական մեկնակետը, Ս. Զավարյանն իր նամակներից մեկում գրում էր. «Ես Բոկլի, նոյնիսկ սոցիալիստների հետ համամիտ չեմ, որ ամբոխն է ազդում անհատի վրայ: Ընդհակառակը անհատները, հերոսներն են տանում ամբոխին. հոգեբանական տեսակետից Կարլեյլը, Միխայլովսկին, Նիկոլայ-ոն (տես «Տնտեսական մատերիալիզմ և գործօն յառաջադիմություն» գիրքը), կարծես, աւելի արդարացի են...»<sup>9</sup>:

Դրա կողքին գոյություն ուներ նաև հայ իրականությունը՝ պետականագուրկ կեցության բազում դարերի արդյունք՝ վառ անհատների իր բարդ խճանկարով, որի ռացիոնալ կարգաբերման հրամայականը պահանջում էր հայի **անհատականության** հզոր ներուժի սահմանազատումը նրա **անհատապաշտության** բացասական մղումներից: Դա ուժեղ անհատների, դրական հերոսների կերտման ինացաբանական մեկնակետն էր, որ դարձավ զավարյանական բարոյաբանության հիմքերից մեկը: Ուստի անխնա կերպով քննադատելով դեպի պարզունակ էգոիզմ տանող հայկական անհատապաշտությունը, Զավարյանը միաժամանակ գնահատում ու հարգում էր ուժեղ և ինքնատիպ անհատներին և՛ սեփական կուսակցության ներսում, և՛ հայ հասարակության մեջ: Դա է պատճառը, որ նրա գործընկերներից շատերը այդպես էլ չէին հասկանում, թե ինչու է Զավարյանի նման բարձրաձաշակ մտավորականը գուրգուրանքով վերաբերվում անկիրթ, իսկ հաճախ նաև դաժան խմբապետների հանդեպ, որոնց գրպաններում, ժամանակակիցների վկայությամբ, կարելի էր միայն «թուրքի ականջներ» գտնել: Կուսակցական կյանքում հաճախ Զավարյանն ամբողջ ժողովներ է տակնուվրա արել՝ ՀՅԴ սկզբունքներից երբեմն շեղվող և ավելորդ դաժանությունների դիմող նման անհատներին պատժից ազատելու համար, որովհետև դարերով ստրկացված, «ռայաների» վերածված հայկական միջավայրում նրան ուրախություն էին պատճառում հանդուգն, խիզախ դեմքերը, քանզի այդ ըմբոստ հոգիները տիրապետում էին հայությանը բաժին ընկած դաժան իրականության մեջ գոյատևելու միակ եղանակին:

9 Ս. Զավարյանի նամակը «Դրօշակի» խմբագրությունը, «Դիւան Հ.Յ. Դաշնակցութեան», հատ. Ա., Պոսթրն, 1934, էջ 202:

Իրա հետ միասին՝ անհատականության սկզբունքի առաջադրումը Զավարյանի համար սեփական տեսակետն ունենալու և սեփական կարծիքը հետապնդելու անհատի անկապտելի իրավունքի պաշտպանության եղանակներից էր: Եվ իբրև հրապարակային գործիչ, իբրև Արևելահայերի (Ռուսահայոց) 1906 թ. Կենտրոնական ժողովի նախագահ՝ Ս. Զավարյանն ազդարարում էր. «...մարդու անձնատրոսիւնը բաժանելու է նրա յայտնած մտքից և կռուելով սխալ կարծիքների հետ, միշտ յարգելու է մարդու անձնատրոսիւնը»<sup>10</sup>:

Բայց որքան հետևողական էր Զավարյանը հանուն անհատականության իր պայքարի մեջ, նույնքան էլ անխնա էր անհատապաշտության ծայրահեղ դրսևորումների ու մանավանդ հայերիս բնորոշ այնպիսի արատների հանդեպ, ինչպիսիք են ազահությունը և հարստության աննպատակ կուտակման հզոր, բայց անհազ մղումը: Հստակորեն սահմանազատելով հավաքական շահի համար ինքնազոհաբերության պատրաստ անհատականության և անձնական ու խմբակային շահերի համար հավաքական նպատակները ոտնատակ տվող անհատապաշտության զույգ ծայրահեղությունները, Զավարյանը ցանկանում էր դեպի առաջին հարթություն ուղղորդել քաղաքակրթական այն հզոր ներուժը, որը «մեծ հայերի» անկրկնելի փառանգի տեսքով պատմությունը բաժին էր թողել երբեմնի աշխարհակալ ազգին:

Հայկական էգոիզմի զավարյանական անխնա ձաղկումները որքան արդիական են իր ժամանակների, նույնքան էլ մեր օրերի համար: Իր մահվանից ուղիղ մեկ տարի առաջ «Ազատամարտում» լույս ընծայած «Վաշխառուական հոգեբանություն» հոդվածում արձանագրելով, որ դրամ շահելու, ոսկի դիզելու տենչը մեզանում հասել է վտանգալոր աստիճանի, Զավարյանը դա բացատրում էր նրանով, որ «Լաւ ապրելը մենք կը հասկնանք անասնական-ֆիզիքական (խմելու-հագուելու) մտքով և տարուած ենք ոչ թէ դրամը կեանքի բարձրացման ծառայեցնելու, այլ նկատելու զայն իբրև մի նպատակ, աստուածութեան նման մի սրբութիւն»<sup>11</sup>:

Հայ հավաքականության մեջ արմատացած նյութապաշտական հոգեբանության և միաժամանակ վախի ու ստրկամտության հաղթահարման ուղղությամբ Զավարյանի գործադրած անդուլ ջանքերի, այդ ընթացքում կրած զրկանքների, չհասկացվելու փաստերի մասին ողջ ազգը միաբերան խոսեց միայն նրա մահվանից հետո, երբ ժամանակակիցների կողմից սկսեցին մեկ առ մեկ գրառվել նրա ամենօրյա բարոյաբանական քարոզները, մեծ ու փոքր «ազգային ջոջերի» կողմից զանազան բարեգործական ձեռնարկների ու «սովելոց հանձնաժողովների» միջոցների յուրացման դեմ անդուլ պայքարի դրվագները և այլն, և այլն: Մա բարոյական արժեքների արմատավորման համար բազում տառապանքներով լի պայքարի մի ամբողջ ողիսական էր, որը տևեց ընդհուպ Զավարյանի մահը: Ազգի բարոյական վերածննդի համար այս ինքնամոռաց պայքարում Զավարյանը ֆիզիկապես մաշեց ու սպառեց իրեն, բայց չընկճվեց հոգեպես,

10 ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 375, թ. 10:

11 Միմոն Զուարեան, Վաշխառուական հոգեբանություն, «Միմոն Զուարեան», հատ. Գ., էջ 558:

թեն դրա համար շատ պատճառներ ուներ: Այդ ինքնամոռաց նահատակության մեջ Զավարյանը չխնայեց ո՛չ ոքի, անգամ սեփական կուսակիցներին, համբերությամբ տարավ իրեն ուղղված «անախորժ մարդու», «մանյակի» և այլ բնորոշումները և ընդունեց այն բազմաթիվ պատասխան հարվածները, որոնք նրա մահից հետո թվում էր, թե պետք է վերածվեին համընդհանուր ապաշխարության: Բայց ապաշխարությունը նույնպես անհատական ու խմբակային եղավ. հավաքականությունը ինչ-որ առումով էկզոտիկ ու չափազանցված համարեց «ամենուն մտրակիչի» ասպետական ոգին ու անսահման խնայողության քարոզը:

Պատճառն ակնհայտ է. դրանք այն արժեքներն էին, որոնք տվյալ պատմաշրջանում սկսել էին հակասել ոչ միայն «ռայայի» արևելյան պարզունակ նյութապաշտությանը, այլև Նոր ժամանակներում Մաքս Վերերի բնորոշմամբ՝ պատմության յուրահատուկ շարժիչը դարձած «կապիտալիզմի ոգուն»: Ժամանակի հայ իրականությունը այս երկու «ոգիների» յուրահատուկ խաչաձևումն էր, ինչը տվյալ պատմաշրջանում անհնարին էր դարձնում ազգի բարոյական վերածննդի հիմնախնդրին անհատապես հետամուտ Զավարյանի հաջողությունը: Այս իրողությունը գիտակցում էին նաև նրա քննադատության թիրախը դարձած կուսակցական ընկերները՝ կասկած անգամ չունենալով «ընկերային Նազովրեցու» հարցադրումների ձիշտ լինելու մեջ:

Իր կյանքի վերջին տարիներին, երբ Զավարյանը Կ. Պոլսում սուր բանավեճերի մեջ էր մտնում ՀՅԴ մեկ այլ նշանավոր գործչի՝ փայլուն հռետոր և հրապարակային միջոցառումների սիրահար Խաչատուր Մալումյանի (Ակնունու) հետ, որին նա համարում էր իր համար ամենաանընդունելի մարդկային տեսակի՝ «դերասանի» մարմնավորում («դերասան» բառը Զավարյանն օգտագործում էր ոչ թե մասնագիտության, այլ նմանակումային գործելակերպի իմաստով), Ակնունին ինքն արտաբերում էր հետևյալ խոսքերը. «Իսրայելի ժողովուրդը մեծ էր, որովհետև կարողացավ ծնիլ Մովսէս, Եզեկիէլ, Երեմիա մարգարէներ, որոնք ժամանակից առաջ կարող էին դատել և զգալ իրականութիւնը: Միմոնն էլ մեր մարգարէն է: Նրա նախապէս տեսածին և զգացածին պէտք է հաւատալ: Նա չարացած է, որովհետև զգում է, որ իրեն ըմբռնող չկայ, և եթէ կան այդպիսիներ, նրանք էլ տևականութեան չեն հաւատում: ...Բայց դու գիտցիր, որ Միմոնի ասածները ձիշդ են: Եւ եթէ նա չար լինի քեզ հանդէպ ևս, բնաւ սրտիդ չառնես»<sup>12</sup>:

Այսպիսով՝ ազգի բարոյական վերածննդի զավարյանական **մեծ երազանքը**՝ բազմակողմանիորեն զարգացած, ուժեղ անհատների և միաժամանակ՝ այլասիրության (ալտրոիզմի) վրա հիմնվող բարի ու ազնիվ մարդկանց հասարակական իդեալը 20-րդ դարասկզբի քաղաքական թոհուրոհի պայմաններում այդպես էլ չստացավ իր հավաքական մարմնավորումը՝ մնալով գաղափարական փոքրամասնության մակարդակին: Սակայն նրա կրողները՝ Զավարյանի հոգեզավակները, խորապես ըմբռնեցին Միամանթոյի խոսքերով՝ «մարդերու մտրակիչ» և միաժամանակ՝

12 Միմոն Զաւարեանի մարգարէութիւնը, «Միմոն Զաւարեան», հատ. Ա., էջ 187:

«մարդերէն մարտիրոս»<sup>13</sup> իրենց ուսուցչի պատգամները: Ավելին՝ նրանք կրթվեցին ու կոփվեցին դրանց ամենօրյա յուրացման արդյունքում:

Փորձենք հասկանալ՝ որո՞նք էին ամբողջական հայի զավարյանական իդեալի հիմնական հատկանիշները:

**Առաջին՝** նվիրումի գաղափարի առարկայացումը: Միմյան Ջավարյանի կողմից «**սուիրուած է**» կախարդական բառով գնահատվեցին բոլոր նրանք, ովքեր հետագայում ստացան ավելի լայն ու ընդգրկուն՝ «անձնուեր», «հավատավոր» և այլ բնորոշումները: Ընտրախավերի յուրօրինակ կառափնարան դարձած Հայոց պատմության մեջ Ջավարյանի համառ ջանքերով վերածնված նվիրումի գաղափարն ու նրանից բխող նվիրագործության և ինքնամաքրման ծեսը ազգի պետական կեցության հիմքերի հիմքը հանդիսացող պետության կառավարման **հոգեմտավոր գործառույթի** վերականգնման սկիզբն էր: Նվիրումի գաղափարի թնեքին ազգի պատմական հիշողությունը վերադառնում էր այն ժամանակները, երբ հայոց հեթանոս արքաները, հաջորդական երեք հանգրվաններով անցնելով նվիրագործության ծեսի միջով, իրավունք էին ստանում ժառանգել նախնիների գահը: Ու քանի որ պետականության վերականգնման խնդրի առջև կանգնած 20-րդ դարասկզբի հայության պայքարը ղեկավարող քաղաքական ուժն ունեցավ իր նոր քուրմը, նրա կողմից մկրտված հերոսները դարձան ազգի պետական կեցության նոր մարմնավորողները:

**Երկրորդ՝** անմնացորդ հավատարմությունը նվիրումի գաղափարի պահապան միջավայրի՝ Սուրբ տաճարի մաքրության ու անաղարտության սկզբունքին: Հարազատ կուսակցությունը դիտարկելով որպես հայոց ամբողջական ոգու նոր տաճար, Ջավարյանն՝ իբրև նրա քուրմ, ՀՅԴ-ի ներսում արմատավորեց դարերով մոռացված համակեցական այն նորմերը, որոնց խախտողներին հենց ինքն էր դուրս վճռում՝ «Դու՛րս Դաշնակցութեան սուրբ տաճարէն...» բացականչությամբ: Որովհետև Ջավարյանի համար ՀՅԴ-ն պարզապես կուսակցություն չէր, այլ ազգային արժեքների, բարոյաքաղաքական նորմերի ու պայքարի ոգու պահապան միջավայր: Դրանով միջնադարում ազգային արժեքների անաղարտության խորհրդանիշը դարձած հայրենի վանքերի ու եկեղեցիների ազգապահպան գործառույթը հայ ազնվականության շառավիղը՝ Նոր ժամանակներում տեղավորվում ու ներդնում էր հայոց ասպետական ոգու նոր մարմնավորումի՝ ՀՅ Դաշնակցության քաղաքական տաճարի մեջ: Ուստի պատահական չէ, որ կամավոր նվիրումի ու ինքնամաքրման հունով է ազգը ձեռք բերել այն ամենը, ինչ ունենք այսօր: Եվ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր տվյալ ձեռքբերումը չի կարող երկար գոյատևել, եթե գիտելիքին և հմտությանը չի գումարվում քաղաքական առաջնորդի անմնացորդ նվիրումն այն հանրույթին, որին նա **կոչված է** ծառայել:

**Երրորդ՝** զավարյանական մարգարեությունների մեջ առկա նախագուշացումները, որոնք կարող են կրկնվել, եթե չգիտակցենք մեզ սպառնացող չարիքի իրական պատճառները: **Ներքին առումով** դա Ջավարյանի կողմից իբրև «վաշխառուական հոգեբանություն» բնորոշված մեր

13 Միամանթօ, Ջաւարեանի հոգիին, «Միմյան Ջաւարեան», հատ. Ա., էջ 123:

հին արատի համաճարակի վերածվելու իրողությունն է, որի ազդեցությամբ մեզանում դրամի պաշտամունքով վարակվում են ոչ միայն չարչին ու առևտրականը, այլև «...նրանք, որոնք հրաւիրուած են զբաղուելու քաղաքականութեամբ, գրականութեամբ, գիտութեամբ»<sup>14</sup>, իսկ **արտաքին առումով**՝ Ջավարյանի հանճարեղորեն ճշգրիտ բնորոշմանն արժանացած՝ «երեկուայ ստրուկի զաւակների»՝ սեփական կամքը օտարին զիջելու պատրաստականությունը: Ուստի Մեծ եղեռնի նախօրեին Ջավարյանի հնչեցրած այն նախազգուշացումը, որ «...մեր զանգուածը պիտի ծնուի սպունգի նման ռուսական նպատակներով»<sup>15</sup>, այսօր էլ մնում է ուժի մեջ, միայն մեկ վերապահությամբ. ներկայիս «ստրուկի զաւակները» չունեն Ջավարյանի ժամանակակիցներին բնորոշ արժեքային ու քաղաքական **տարուները**: Ուստի պատրաստ են «ներծծվել» ոչ միայն ռուսական, այլև ցանկացած այլ օտար նպատակի մեջ, միայն թե **հազենան**:

**Չորրորդ**՝ կամավոր ինքնագոհաբերման պատրաստականությունը:

Ազգի բարոյական վերածննդի գաղափար-սկզբունքով առաջնորդվող հերոս-մարգարեների ժամանակը՝ զավարյանների ժամանակը, այսօր էլ պատմություն չի դարձել, քանզի մեր ինքնության համար պայքարի հավերժական գործընթացը երբեք էլ ավարտ չունի: Ուստի զավարյանական երազանքի հիմնական սկզբունքների շարադրանքն ավարտենք՝ մեջբերելով **հայոց արժանապատվության** համար պայքարի մի փոքրիկ դրվագի մասին նրա խոսքերը: 1892 թվականի դեկտեմբերի 27-ին, երբ նոր էր միայն ձևավորվել ՀՅ Դաշնակցությունը, արևելահայոց մշակութային մայրաքաղաք Թիֆլիսում ազգը հրաժեշտ էր տալիս իր նոր ինքնության յուրահատուկ խորհրդանիշի վերածված Գրիգոր Արծրունուն: Սակայն, փորձելով ստորացնել Մեծ մտածողի հուղարկավորության համար ժամանած տասնյակ հազարավոր բազմությանը, ցարական վարչակազմը արգելել էր թափորի անցումը Թիֆլիսի կենտրոնական՝ Գոլովինյան (այժմ՝ Ռուսթավելու) պողոտայով: Ուստի դաշնակցական երիտասարդների ու գաղթական մշեցիների գլուխն անցած Սիմոն Ջավարյանը ընդհարվում է ցարական ժանդարմների հետ, ձեռքում է նրանց շղթան և սգո թափորն ուղղորդում դեպի Կովկասի կառավարչապետի պալատի առջևով անցնող այդ մայրուղին, որի համար քիչ անց ձերբակալվում է և արդեն բանտում նստած՝ տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ մի թղթակցություն է ուղարկում «Դրոշակին»՝ հետևյալ եզրահանգումով. «**Եթե նոյն իսկ այս դէպքում տեղի ունենար և արինահեղություն, թափած արինը կը լինէր Սուրբ արին, սպանվածները՝ նահատակներ...**(ընդգծումը մերն է-Գ. Խ)»<sup>16</sup>: Այս փոքրիկ նախադասության մեջ ներառված «նահատակներ» և «Սուրբ արին» հասկացությունները միմյանց շաղկապող զավարյանական «**Եթե նոյն իսկ**»-ը ինքնագոհաբերումի խորհուրդն ամփոփող դաշնակցականի երդման մեջ առկա «**Եթե հարկ լինի**» խոստումի սաղմնային արտահայտությունն էր:

14 Սիմոն Ջաւարեան, Վաշխառուական հոգեբանութիւն, «Սիմոն Ջաւարեան», հատ. Գ., Անթիլիաս, 1997, էջ 558:

15 Սիմոն Ջաւարեանի մարգարէութիւնը, «Սիմոն Ջաւարեան», Ա. հատոր, էջ 185-186:

16 Նամակ Կովկասից, Թիֆլիս, «Դրոշակ», 1893, մարտ, N 4, էջ 7:



Ուստի, երբ մեզանում կրկին արձանագրվում են համընդհանուր ընդարմացման, ազգային արժեքների հանդեպ անտարբերության մեծացման և ակնհայտ նահանջի միտումներ, **ամբողջական հայի** զավարյանական իդեալը և մանավանդ՝ նրան բնորոշ **կամավոր ինքնազոհաբերման պատրաստականությունը** ձեռք են բերում ավելի քան արդիական իմաստ ու նշանակություն:

Summary

## SACRAL DREAM OF ZAVARYAN

Gevorg S. Khudinyan

The article is subject to review the main phases of proposal and prosecution by Simon Zavaryan concerning the idea – principle of nation’s moral rebirth. It is shown that the idea was proposed at two levels: first, implantation of heroic idea and creation of honest, courageous and militant moral image of Armenian by propaganda and hard work within their party and second, the nation’s moral rebirth idea–principle’s application in the name of healthy and vibrant nation’s formation embodying the moral qualities of the Armenian people.

It is scientifically proven that Zavaryan’s dream of the nation’s moral revival, which represented fully developed and at the same time strong individual, basing upon altruism, has not been implemented in a politically unstable period of the 20th century and remained at the level of ideological minority, who founded the Armenian statehood. The paper presents the features of Armenians as Zavaryan outlined them, which could be exemplary in our time.

ՏԵՄԼԱԿԱՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 4 (44) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես



*Լուսանկարը՝ Գաբրիել Փանոսյանի*

Երդման արարողություն Միմոն Զավարյանի գերեզմանի մոտ:  
Այգեհատ, 26 հոկտեմբերի, 2013 թ.: